# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Ամասիա, (0246) 22310, amasia.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

27 ՕԳՈՍՏՈՍԻ 2018թվականի N 68-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԱՄԱՍԻԱ 18 ՓՈՂՈՑ 22 ՏԱՆ ԲՆԱԿԻՉ ՀԱՅԿ ՄԱՐՍԵԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման 1-ին մասի 1-ին ենթակետով հաստատված Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգի 9-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին 2018 թվականի հունիսի 6-ին Հայկ Կարապետյանի կողմից ներկայացված դիմումը

որոշում եմ՝

Հայկ Կարապետյանին տալ շինարարության թույլտվություն՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնք, Ամասիա բնակավայրում 2-րդ փողոց թիվ 19/1 հասցեում առևտրի սրահին կից 2-րդ կատեգորիայի ավտոտնակի շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՔԵՄԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20/18 թ. օգոստոսի 27
գ.Ամասիա